



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1121-Ա/Ք

«10» 10 2011թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 «ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավկայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավկայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչությանը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավկայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:

4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել չափորոշիչ փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ
ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի տեխնիկ որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝
 - 1) առկա,
 - 2) հեռակա,
 - 3) դրսեկություն (էքստեռնատ):
3. Միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
 - 1) կրթության առկա ձևով.

ա. միջնակարգ կրթության հիմքով՝	3 տարի
բ. հիմնական կրթության հիմքով՝	4 տարի
 - 2) կրթության հեռակա ձևով.

ա. միջնակարգ կրթության հիմքով՝	4 տարի
--------------------------------	--------
 - 3) դրսեկության (էքստեռնատ) ձևով.Կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4140 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 <ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը(ները)՝

- 1) տեխնիկ- շինարար,
- 2) տեխնիկ- տեղագրագետ,
- 3) աշխղեկ՝ շինարարության,
- 4) տեխնիկ-նախագծող:

7. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) արտադրատեխնոլոգիական.

ա. ավտոմոբիլային ճանապարհների և անբերրոմների շինարարության և շահագործման մասին օրենքները և նորմատիվային փաստաթղթերը ճիշտ ընկալելը և կիրառելը,

բ. շինարարական, մոնտաժային աշխատանքների կատարման կանոնների և նորմերի, տեխնիկական պայմանների և տեխնոլոգիաների, որակի պահպանումը,

գ. տիպային նախագծեր, նախահաշիվներ, նորմատիվային տեխնիկական փաստաթղթեր, գիտատեխնիկական տեղեկատվություն, տեղեկատու և մասնագիտական գրականություն ուսումնասիրելը,

դ. շահագործման աշխատանքների կատարման կանոնների և նորմերի, տեխնիկական պայմանների և տեխնոլոգիաների, որակի պահպանումը,

ե. ավտոմոբիլային ճանապարհների և անբերրոմների շինարարությանը, հետազննումների և դրանց հաշվետվությունների պատրաստմանը վերաբերող տվյալների հավաքում և տեխնիկական օգնության տրամադրում,

զ. շինարարական նյութերի որակի մուտքային վերահսկում,

է. շինարարական նյութերի, մեքենասարքավորումների, տրանսպորտային և տեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործում,

ը. աշխատանքային փաստաթղթերի ձևավորման և մշակման տեխնիկական աշխատանքների կատարում,

թ. շինարարական և շահագործման աշխատանքների կատարման ընթացքում դժբախտ պատահարների վտանգի հայտնաբերման և անվտանգության միջոցների ու կանոնների ներդրման աշխատանքներին մասնակցելը,

ժ. շինարարության և շահագործման բնագավառի տեխնիկական գիտելիքների, սկզբունքների և փորձի օգտագործումը՝ աշխատանքի ընթացքում ի հայտ եկած խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար,

ժա. բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

2) կազմակերպչական առավարչական

ա. աշխատանքային կոլեկտիվի աշխատանքի կազմակերպում,

բ. շինարարական մոնտաժային աշխատանքների կազմակերպում,

գ. շահագործման աշխատանքների կազմակերպում,

դ. ոչ ստանդարտ իրավիճակներում աշխատանքների կազմակերպում և լավագույն լուծումների կիրառում,

ե. շինարարական և շահագործման աշխատանքների որակի տեխնիկական հսկման և կառավարման կազմակերպում,

զ. աշխատանքային տեղամասում աշխատանքի անվտանգության և բնապահպանական միջոցառումների ապահովում,

է. այլ աշխատողների ղեկավարում:

ԳԼՈՒԽ 3.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 <ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

- 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ.
- 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն.

- 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն.
- 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն.
- 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ.
- 6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն.
- 7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն.
- 8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն.
- 9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ.
- 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

2905 <ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

- 1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները.

- 2) տիրապետի հայոց լեզվին.
- 3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով.
- 4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին.
- 5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ.
- 6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.
- 7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն.
- 8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները.
- 9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ.

12. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին.

13. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 <ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ

դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն.

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հազեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի,

բ. օտար լեզվի,

գ. ավտոմոբիլային ճանապարհների նախագծման,

դ. արհեստական կառույցների,

ե. ավտոմոբիլային ճանապարհների շինարարության տեխնոլոգիայի և կազմակերպման,

զ. ճարտարագիտական գրաֆիկայի,

է. առաջին բուժօգնության և քաղաքացիական պաշտպանության,

ը. համակարգչային:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. էլեկտրատեխնիկայի,

բ. շինարարական նյութերի և երկրաբանության,

գ. ինժեներական գեոդեզիայի:

3) Ուսումնական արհեստանոցներ՝

ա. ընդհանուր տեխնիկական միջոցների:

4) Սպորտային համալիր՝

ա. Մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով.

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով.

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները.

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության.

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է.

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը.

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ.

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարման ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում.

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է.

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին.

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով.

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշով 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 <ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 2905 <Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում> մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

- 2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,
- 5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,
- 6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,
- 7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Միջին մասնագիտական կրթության 2905 <<Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում>> մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Ուսումնառության արդյունք 2.	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,

	գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Ուսումնառության արդյունք 3.	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Ուսումնառության արդյունք 4.	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ, բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը, է. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Ուսումնառության արդյունք 5.	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),

	<p>բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1.	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>զ. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>

Ուսումնառության արդյունք 2.	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
Ուսումնառության արդյունք 3.	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<p>ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>բ. առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>դ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>ե. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>զ. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,</p> <p>է. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>

Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1.	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV) , դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
Ուսումնառության արդյունք 2.	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,

	<p>բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
Ուսումնառության արդյունք 3.	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանիքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>դ. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>ե. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
Ուսումնառության արդյունք 4.	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
Կատարման չափանիշներ	<p>ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային

	հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1 .	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	<p>ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</p> <p>դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
Ուսումնառության արդյունք 2.	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<p>ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p>

	<p>դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
Ուսումնառության արդյունք 3.	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,</p> <p>բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),</p> <p>դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>ե. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>
Ուսումնառության արդյունք 4.	Գրաֆիկական խմբագրում և նկարագրում
Կատարման չափանիշներ	<p>ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshares պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ. գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
Ուսումնառության արդյունք 5.	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>բ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>գ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>

Ուսումնառության արդյունք 6.	Համացանցում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</p> <p>բ. օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը,</p> <p>գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում , համացանցային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 2905 «Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-001
Մոդուլի նպատակը	Ձևավորել նախագծա-կոնստրուկտորական, տեխնոլոգիական և տեխնիկական այլ փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Մշակել պարզ պատկերների և տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կորդինատներով և այլն,</p> <p>բ.ճիշտ է կատարում պարզ պատկերների պրոյեկտումը հարթությունների վրա,</p> <p>գ.ճիշտ է կատարում տիպային մեքենամասերի պրոյեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոյեկցիաները,</p> <p>դ.ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված տիպային մեքենամասերի աշխատանքային գծագրերը և էսքիզները,</p> <p>ե. ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա տիպային մեքենամասերի չափերը,</p> <p>զ.ճիշտ է կառուցում տիպային մեքենամասերի տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերները,</p> <p>է.ճիշտ է կատարում տիպային մեքենամասի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Մշակել աշխատանքային գծագրեր և էսքիզներ
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում գծագրերի ձևավորման կանոնները,</p> <p>բ.ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված չափերի թույլվածքները և մաքրության դասերի նշանակումները,</p> <p>գ.ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերում և էսքիզներում, պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները,</p> <p>դ.ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները,</p> <p>ե.ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա երիթը, բազմաերիթը, ատամնասանիվը, տարբեր նշանակության առվակները, երեսակները և նմանատիպ այլ տարրերը,</p> <p>զ. ճիշտ է պատկերում շինարարական գծագրության տարրերը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Մշակել հավաքական գծագրեր
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է պատկերում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին մեքենամասերի դիրքավորումները,</p>

	<p>բ. ճիշտ է պատկերում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնաանվային կառչում, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ,</p> <p>գ.ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները,</p> <p>դ.ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը,</p> <p>ե. ճիշտ է ընտրում համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը՝ օգտվելով գծագրերի փաթեթից և հավաքական գծագրից,</p> <p>զ. ճիշտ է ընտրում տեղամասի գծագիրը՝ օգտվելով հատակագծից,</p> <p>է.ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և հատակագծի տեխնիկական պահանջները,</p> <p>ը. ճիշտ է մշակում և ձևավորում կոնստրուկտորական փաստաթղթերը,</p> <p>թ.ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործունեությանն առնչվող համակարգչային ծրագրերի կիրառական փաթեթները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Մշակել գծագրեր համակարգչային գծանկարչության տարրերով
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում AutoCAD ծրագրային փաթեթի հնարավորությունները,</p> <p>բ. ճիշտ է բացում AutoCAD-ի պատուհանը, համակարգչային մենյուները, գործիքային վահանակները, հրամանների և կարգավիճակի տողերը,</p> <p>գ. ճիշտ է կարգավորում աշխատանքային միջավայրը,</p> <p>դ. ճիշտ է ընտրում կոորդինատների համակարգերը, չափման միավորները, գծագրի սահմանների դրոյմական և մետրական համակարգերը,</p> <p>ե. ճիշտ է ընտրում մասշտաբները,</p> <p>զ.ճիշտ է տալիս երկրաչափական օբյեկտների կառուցման հրամանները,</p> <p>է. ճիշտ է ընտրում կառուցման ռեժիմները (երկչափ համակարգում),</p> <p>ը. ճիշտ է կառավարում էկրանային պատկերը և ստեղծում տեքստ,</p> <p>թ. ճիշտ է կիրառում երկրաչափական չափերը և թույլտվածքները,</p> <p>ժ. ճիշտ է ընտրում չափերի ոճը և չափային համակարգային փոփոխականները,</p>

	<p>ժա. ճիշտ է պատկերում տեսքային էկրանները մոդելի տարածության մեջ և թղթի տարածության մեջ, ժբ. ճիշտ է կառավարում տեղեկատվության ելքը տպագրման և գծագրման միջոցով:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՆՏԵՆՏԻՐԱԿԱՆ ԳԵՈԴԵԶԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-002
Մոդուլի նպատակը	Ձևավորել հատակագծերում և քարտեզներում տեղանքի իրավիճակի և ռելիեֆի պատկերման, ինչպես նաև չափումներ կատարելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-001<< Ճարտարագիտական գծանկարչություն>>, ԱՀ ԱԱՕ 5 -11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ընտրել մասշտաբ և որոշել կետերի կոորդինատները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի դերն ու խնդիրները, բ. ճիշտ է օգտագործում մասշտաբները, գ. ճիշտ է պատկերում մասշտաբները, դ. ճիշտ է որոշում մասշտաբների ճշտությունը, ե. ճիշտ է որոշում և տեղադրում կետերի ուղղանկյուն կոորդինատները, զ. ճիշտ է որոշում և տեղադրում գծերի երկարությունը, է. ճիշտ է որոշում կետերի աշխարհագրական կոորդինատները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Պատկերել հատակագծում և քարտեզում տեղանքի իրավիճակը և ռելիեֆը
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում տեղանքի տարրերը, բ.ճիշտ է պատկերում իրադրության պայմանական նշանները, գ.ճիշտ է պատկերում ռելիեֆի հիմնական ձևերը հատակագծում և քարտեզում,</p>

	<p>դ. ճիշտ է պատկերում ռելիեֆի հիմնական ձևերը հորիզոնականներով,</p> <p>ե. ճիշտ է որոշում կետերի բարձրանիշը</p> <p>զ. ճիշտ է կառուցում հորիզոնականները կետերի բարձրանիշերով:</p>
Ուսումնառության արդյունք 3	Չափել և որոշել մակերեսները հատակագծերում և քարտեզներում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում մակերեսները տարբեր եղանակներով,</p> <p>բ. ճիշտ է օգտագործում պլանիմետրը,</p> <p>գ. ճիշտ է հաշվում մակերեսը պլանիմետրով քարտեզի և հատակագծի վրա:</p>
Ուսումնառության արդյունք 4	Կողմնորոշել գծերը տեղանքի վրա
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում միջօրեականները,</p> <p>բ. ճիշտ է որոշում ազիմուտի, անկյունամասի/ռումբի/, ուղղորդող անկյունները,</p> <p>գ. ճիշտ է որոշում ուղիղ և հակադարձ ազիմուտները,</p> <p>դ. ճիշտ է որոշում մասշտաբների ճշտությունը,</p> <p>ե. ճիշտ է անցնում ազիմուտից անկյունամաս և հակառակը,</p> <p>զ. ճիշտ է որոշում միջօրեականների մերձեցման անկյունը,</p> <p>է. ճիշտ է կատարում բուսուլների ստուգումներ,</p> <p>ը. ճիշտ է որոշում բուսուլի օգնությամբ գծի ազիմուտը և անկյունամասը,</p> <p>թ. ճիշտ է կողմնորոշվում տեղագրական քարտեզներով և հատակագծերով:</p>
Ուսումնառության արդյունք 5	Կատարել անկյունային չափումներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում թեոդոլիտների նշանակությունը, տեսակները և դասակարգումը,</p> <p>բ. ճիշտ է որոշում վեռների ճշտությունը,</p> <p>գ. ճիշտ է բացատրում թեոդոլիտի հիմնական առանցքները և դրանց փոխադարձ դասավորությունը,</p> <p>դ. ճիշտ է բերում թեոդոլիտը աշխատանքային դիրքի,</p> <p>ե. ճիշտ է կատարում թեոդոլիտի հիմնական ստուգումները և վերացնում թերությունները,</p>

	<p>գ. ճիշտ է չափում հորիզոնական անկյունները,</p> <p>է. ճիշտ է հաշվում հորիզոնական անկյունը և լրացնում անկյունաչափական մատյանը,</p> <p>ը. ճիշտ է որոշում թեոդոլիտի ուղղաձիգ շոջանի գրոյի տեղը,</p> <p>թ. ճիշտ է որոշում լիմբի բաժանման գիծը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Կատարել գծային չափումներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կետերի ամրացման կարգը,</p> <p>բ. ճիշտ է կատարում գծի նշաձողումը տարբեր պայմաններում,</p> <p>գ. ճիշտ է օգտագործում չափող սարքերը,</p> <p>դ. ճիշտ է որոշում հեռաչափի հաստատունը,</p> <p>ե. ճիշտ է հաշվում հեռաչափով գծի երկարությունը,</p> <p>զ. ճիշտ է որոշում անմատչելի կետի հեռավորությունը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-003
Մոդուլի նպատակը	Ձևավորել գեոդեզիական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-002 <<Ինժեներական գեոդեզիա>>, ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել մակարդակաչափման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում բացարձակ և հարաբերական բարձրությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մակարդակաչափի և քանոնի նշանակությունը, տեսակները և դասակարգումը,</p> <p>գ. ճիշտ է կատարում հաշվեցույցի ընթերցում քանոնով,</p>

	<p>դ. ճիշտ է բերում մակարդակաչափը աշխատանքային դիրքի,</p> <p>ե. ճիշտ է կատարում մակարդակաչափի հիմնական ստուգումները,</p> <p>զ. ճիշտ է կատարում երկրաչափական մակարդակաչափումը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կապող, իքսային, հետևի, առջևի կետերը,</p> <p>ը. ճիշտ է կատարում ծրագծի երկայնական և լայնական մակարդակաչափումները,</p> <p>թ. ճիշտ է կատարում մակարդակաչափման դաշտային ստուգումներ,</p> <p>ժ. ճիշտ է կատարում երկայնական և լայնական մակարդակաչափման մատյանների լրացում և մշակում,</p> <p>ժա. ճիշտ է մշակում երկայնական և լայնական կտրվածքների գծագրերը,</p> <p>ժբ. ճիշտ է կատարում մակերեսների մակարդակաչափումը և քառակուսային ցանցի գագաթների բարձրանիշերի հաշվումը,</p> <p>ժգ. ճիշտ է կազմում հորիզոնական հրապարակի հատակագիծը հորիզոնականներով,</p> <p>ժդ. ճիշտ է կատարում եռանկյունաչափական մակարդակաչափումը,</p> <p>ժե. ճիշտ է հաշվում վերագինումը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Կազմել հրապարակի և ծրագծի հատակագիծը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի առանցքային գծի հիմնական կետերը և դրանց վերականգնումը,</p> <p>բ. ճիշտ է հաշվում դարձի անկյունը, միջանկյունային հեռավորությունը, թեքման անկյունը,</p> <p>գ. ճիշտ է պատկերում շրջանային և անցումային կորերի կետերը,</p> <p>դ. ճիշտ է հաշվում շրջանային և անցումային կորերի տարրերի արժեքները,</p> <p>ե. ճիշտ է հաշվում շրջանային և անցումային կորերի գլխավոր կետերի ցցանշման արժեքները,</p> <p>զ. ճիշտ է ստուգում կորի վերջի ցցանշման արժեքը,</p> <p>է. ճիշտ է կատարում ցցանշում և լրացնում ցցանման գրքույկը,</p> <p>ը. ճիշտ է տեղափոխում տանգենսի գագաթնակետը կորի վրա,</p> <p>թ. ճիշտ է կազմում դարձի անկյունների, ուղիղների և կորերի ամփոփագրերը և ճիշտ կատարում ծրագծի ստուգումները,</p> <p>ժ. ճիշտ է կատարում քառակուսային ցանցի տեղակայում, գծային և անկյունային չափումներ օդանավակայանների</p>

	<p>հրապարակի հանույթի համար, Ժա. ճիշտ է կազմում հրապարակի և ծրագծի հատակագիծը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել թեոդոլիտային , պտուտաչափական և լուսատեղագրական հանույթները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կատարում թեոդոլիտային աշխատանքները և լրացնում մատյանները, բ. ճիշտ է կատարում թեոդոլիտային հանույթի գրասենյակային աշխատանքները, գ. ճիշտ է կատարում թեոդոլիտային հանույթը, դ. ճիշտ է կազմում հատակագիծը և ձևավորում, ե. ճիշտ է կազմում պտուտաչափական հանույթի հատակագծայինյին հիմքը, զ. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթը, է. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթի մատյանի լրացում, ը. ճիշտ է կատարում պտուտաչափական հանույթի գծանկարչական մշակում, հատակագծի կազմում և ձևավորում, թ. ճիշտ է ներկայացնում լուսատեղագրական հանույթները, ժ. ճիշտ է ներկայացնում լուսանկարաչափական կողորդինատները, Ժա.ճիշտ է բացատրում լուսասխեմանները և լուսանկարապլանները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Կատարել գեոդեզիական աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջները, բ. ճիշտ է տեղադրում նախագծային գծի երկարությունը, գ.. ճիշտ է կառուցում տրված մեծության անկյունը, դ. ճիշտ է տեղափոխում խրամատի հատակում և բարձունքում նախագծային նիշը, ե. ճիշտ է վերականգնում առանցքային գիծը, զ. ճիշտ է կատարում շրջանային կորի մանրամասն նշահարում, է. ճիշտ է կատարում անցումային կորի մանրամասն նշահարում, ը. ճիշտ է կատարում հողային պաստառի նշահարում լիցքի և փորվածքի դեպքում,</p>

	<p>թ. ճիշտ է կատարում ջրթող խողովակի, փոքր կամրջի, ճանապարհամերձ կառույցի նշահարում,</p> <p>ժ. ճիշտ է որոշում շինարարական թույլտվածքները և ճշտությունը նշահարման աշխատանքներ կատարելիս,</p> <p>ժա. ճիշտ է իրականացնում շինարարական աշխատանքների գեոդեզիական հսկողությունը,</p> <p>ժբ. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտմանը վերաբերող վարչական տույժերը,</p> <p>ժգ. ճիշտ է հրահանգավորում, կազմակերպում և իրականացնում գեոդեզիական աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի անվտանգության միջոցառումները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-004
Մոդուլի նպատակը	Ձևավորել էլեկտրական շղթաների հավաքման, պարամետրերի հաշվարկման, էլեկտրական մեքենաների, սարքավորումների, էլեկտրական հաղորդակների և էլեկտրոնային սարքավորումների կիրառման և շահագործման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ ԱԱՕ 5-11-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Հավաքել էլեկտրական շղթաներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթա հասկացությունը, հիմնական տարրերը և սկզբունքային սխեմաները,</p> <p>բ. ճիշտ է հավաքում հաստատուն հոսանքի պարզագույն շղթան և ներկայացնում հաշվարկման մեթոդները,</p> <p>գ. ճիշտ է հավաքում փոփոխական հոսանքի շղթան և ներկայացնում հաշվարկման մեթոդները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում աստղաձև և եռանկյունաձև միացված համաչափ և ոչ համաչափ եռաֆազ շղթաները և դրանց հաշվարկման մեթոդները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Հաշվարկել հոսանքի շղթաների էլեկտրական պարամետրերը

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում հաստատուն հոսանքի պարզագույն շղթայի էլեկտրական պարամետրերը,</p> <p>բ. ճիշտ է որոշում փոփոխական հոսանքի շղթաների հիմնական էլեկտրական պարամետրերը,</p> <p>գ. ճիշտ է որոշում եռաֆազ հոսանքի էլեկտրական շղթաների հիմնական էլեկտրական պարամետրերը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Աշխատեցնել տրանսֆորմատորները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տրանսֆորմատորների դերն ու նշանակությունը և հիմնական տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում միաֆազ տրանսֆորմատորների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառությունը,</p> <p>գ. ճիշտ է աշխատեցնում տրանսֆորմատորները պարապ ընթացքի, կարճ միացման և աշխատանքային ռեժիմներում,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում եռաֆազ տրանսֆորմատորների, ավտոտրանսֆորմատորների և եռակցման տրանսֆորմատորների կառուցվածքները, աշխատանքի սկզբունքը և կիրառությունները,</p> <p>ե. ճիշտ է աշխատեցնում եռաֆազ տրանսֆորմատորները,</p> <p>զ. ճիշտ է աշխատեցնում ավտոտրանսֆորմատորները,</p> <p>է. ճիշտ է աշխատեցնում եռակցման տրանսֆորմատորը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ընտրել և աշխատեցնել էլեկտրական մեքենաները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ընտրում և աշխատեցնում եռաֆազ անհամաժամ շարժիչը տարբեր աշխատանքային ռեժիմներում,</p> <p>բ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում եռաֆազ համաժամ շարժիչը տարբեր աշխատանքային ռեժիմներում,</p> <p>գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում հաստատուն հոսանքի մեքենան որպես գեներատոր և որպես շարժիչ,</p> <p>դ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում գեներատորները աշխատանքային տարբեր ռեժիմներում:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ճանապարհա շինարարական մեքենաների և սարքավորումների էլեկտրահաղորդակները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրահաղորդակի դերը ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների աշխատանքի և շահագործման ընթացքում,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրահաղորդակի մեքենաները, փոխանցումները, կառավարման, պաշտպանիչ և էլեկտրաչափիչ սարքերը և դրանց շահագործման կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրական շարժիչները,</p>

	<p>դ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում էլեկտրական ապարատները և կառավարման սխեմաները,</p> <p>ե. ճիշտ է ընտրում էլեկտրահաղորդման լարերը, մալուխները հուսալի և անվտանգ էլեկտրամատակարարման նպատակով,</p> <p>զ. ճիշտ է շահագործում և սպասարկում էլեկտրապահարանները:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ընտրել էլեկտրոնային սարքերը և սարքավորումները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում էլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները,</p> <p>բ. ճիշտ է ընտրում, գործարկում և աշխատեցնում ճանապարհաշինարարական մեքենաներում և սարքավորումներում, մասնագիտացված շարժակազմերում կիրառվող էլեկտրոնային սարքավորումները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում և աշխատեցնում ճանապարհաշինարարական մեքենաներում և սարքավորումներում կիրառվող էլեկտրոնային համուղղիչները և կայունարարները,</p> <p>դ. ճիշտ է ընտրում, գործարկում և աշխատեցնում էլեկտրոնային գեներատորները,</p> <p>ե. ճիշտ է օգտագործում էլեկտրոնային չափիչ սարքերը և իրականացնում չափումներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	«ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-005
Մոդուլի նպատակը	Ձևավորել ինժեներա-երկրաբանական գործընթացների և երևույթների վերլուծման և գնահատման, պաշտպանական ինժեներական միջոցառումների հանձնարարականների մշակման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ մասնագիտությանն առնչվող հիմնական բնագավառները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում երկրաբանության նշանակությունը ճանապարհային շինարարությունում,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում երկիրը և նրա ձևը,</p>

	գ. ճիշտ է ներկայացնում երկրի կառուցվածքը և նրա թաղանթները:
Ուսումնառության արդյունք 2	Ճանաչել երկրակեղևի հանքանյութերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ճանաչում երկրակեղևի հանքանյութերը, բ. ճիշտ է տարբերում և ընտրում ապարակազմող հանքանյութերը:
Ուսումնառության արդյունք 3	Ճանաչել լեռնային ապարները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում լեռնային ապարները, բ. ճիշտ է տարբերում և ընտրում լեռնային ապարները, գ. ճիշտ է ներկայացնում լեռնային ապարների հողմնահարումը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել երկրի արտաձին ուժերի երկրաբանական գործունեությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում հոսող ջրերի երկրաբանական գործունեությունը, բ. ճիշտ է գնահատում ծովի երկրաբանական գործունեությունը, գ. ճիշտ է գնահատում սառցադաշտերի երկրաբանական գործունեությունը, դ. ճիշտ է բնութագրում լճերի, ճահիճների նստվածքները, ե. ճիշտ է գնահատում քամու երկրաբանական գործունեությունը:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ ստորգետնյա ջրերի ազդեցությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում ստորգետնյա ջրերը, բ. ճիշտ է ներկայացնում գրունտային ջրերը, գ. ճիշտ է ներկայացնում ճնշումային ջրերը և աղբյուրները, դ. ճիշտ է ընտրում գրունտային ջրերի մակարդակի արհեստական իջեցման եղանակը, ե. ճիշտ է որոշում ստորգետնյա ջրերի քիմիական կազմը, զ. ճիշտ է գնահատում սողանքի ապարաթափվածքի կարստի ազդեցությունը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել երկրի կեղևի աստիճանական փոփոխությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում <<երկրաբանական տարիք>> հասկացությունը,

	<p>բ. ճիշտ է բացատրում կյանքի զարգացումը երկրի վրա և հիմնական երկրաբանական իրադարձությունները,</p> <p>գ. ճիշտ է գնահատում և կիրառում չորրորդական նստվածքները,</p> <p>դ. ճիշտ է օգտագործում երկրաբանական քարտեզները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ. ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՇԵՍԱԿԱՆ ՔԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՂ ՆՅՈՒԹԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-006
Մոդուլի նպատակը	Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների և անրողրոմների շինարարության, շահագործման, նորոգման և պահպանման աշխատանքներում օգտագործվող բնական և արհեստական քարային նյութերի, օրգանական կապակցող նյութերի և ասֆալտաբետոնե խառնուրդների ընտրության և կիրառման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել ճանապարհաշինարարական նյութերի հիմնական հատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է գնահատում մեխանիկական հատկությունները,</p> <p>բ. ճիշտ է գնահատում ֆիզիկական հատկությունները,</p> <p>գ. ճիշտ է գնահատում քիմիական հատկությունները,</p> <p>դ. ճիշտ է գնահատում տեխնոլոգիական հատկությունները,</p> <p>ե. ճիշտ է գնահատում շահագործական հատկությունները,</p> <p>զ. ճիշտ է որոշում նյութերի հատկությունների ցուցանիշի գնահատականը մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ընտրել բնական քարային նյութեր
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում բնական քարային նյութերը,</p> <p>բ. ճիշտ է դասակարգում լեռնային ապարները,</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում լեռնային ապարների արդյունահանումը և վերամշակումը,</p> <p>դ. ճիշտ է ընտրում բնական քարային նյութերը,</p> <p>ե. ճիշտ է իրականացնում քարային նյութերի ընդունումը, պահպանումը և տեղափոխումը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պահպանումը լեռնային ապարները արդյունահանելիս և վերամշակելիս:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ընտրել խեցեգործական /կերամիական/ նյութեր
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում խեցեգործական նյութերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում խեցեգործական նյութերի արտադրությունը,</p> <p>գ. ճիշտ է ընտրում խեցեգործական նյութերը,</p> <p>դ. ճիշտ է ընտրում ճանապարհային գերաթուրծ աղյուս և այլ խիտ արտադրատեսակները,</p> <p>ե. ճիշտ է ընտրում խեցեգործական խիճը և կոպիճը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ընտրել անօրգանական հումքի հալույթից ստացված նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում խարամների տեխնիկական բնութագիրը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում խարամների վերամշակման գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում խարամային նյութերին առաջադրվող պահանջները,</p> <p>դ. ճիշտ է ընտրում ապակու հալույթից ստացվող նյութերը և արտադրատեսակները,</p> <p>ե. ճիշտ է ընտրում հալված քարային նյութերը և արտադրատեսակները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ընտրել օրգանական կապակցող նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում օրգանական կապակցող նյութերը,</p> <p>բ. ճիշտ է ընտրում բնական բիտումները և բիտումապարունակ ապարները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում թերթաքարային բիտումները,</p> <p>դ. ճիշտ է ընտրում քարածխային, փայտային և տորֆային ձյութերը,</p>

	<p>ե. ճիշտ է ընտրում ճանապարհային էմուլսիաները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում օրգանական կապակցող նյութերի ընդունումը, տեղափոխումը և պահպանումը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ընտրել ասֆալտբետոնը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում ասֆալտբետոնը,</p> <p>բ. ճիշտ է գնահատում ասֆալտբետոնի հատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում լցանյութերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում տաք և գոլ ասֆալտբետոնե խառնուրդներին ներկայացվող պահանջները,</p> <p>ե. ճիշտ է հաշվում ասֆալտբետոնի կազմը,</p> <p>զ. ճիշտ է բացատրում ասֆալտբետոնե խառնուրդների արտադրության տեխնոլոգիան,</p> <p>է. ճիշտ է ընտրում գոլ ասֆալտբետոնի խառնուրդները,</p> <p>ը. ճիշտ է ընտրում սառը ասֆալտբետոնը, ձուլածո ասֆալտը, ձյութաբետոնը, բիտումահանքային խառնուրդները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը ասֆալտբետոնե խառնուրդների արտադրության ընթացքում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԲՆԱՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-007
Մոդուլի նպատակը	Ձևավորել գրունտների ընտրության և կիրառման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-005, << Երկրաբանական գոյացությունների ընտրությունը և կիրառումը ավտոմոբիլային ճանապարհների շինարարության գործընթացում >> մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ գրունտների կազմը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում գրունտները,

	<p>բ. ճիշտ է որոշում գրունտների կազմի գլխավոր (միներալները) հանքանյութերը,</p> <p>գ. ճիշտ է բացատրում կոլոիդները (սոսնձանյութ) գրունտներում, նրանց կազմը և հատկությունները,</p> <p>դ. ճիշտ է գնահատում գրունտների կլանողական հատկությունը,</p> <p>ե. ճիշտ է գնահատում գրունտների օրգանական մասի բաղադրությունը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Որոշել գրունտների հատիկաչափական կազմը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում գրունտները՝ ըստ հատիկաչափական կազմի,</p> <p>բ. ճիշտ է որոշում գրունտների հատիկաչափական կազմը և ընտրում տեսակը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Որոշել գրունտների ֆիզիկական հատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում գրունտի մասնիկների խտությունը,</p> <p>բ. ճիշտ է որոշում գրունտի խոնավությունը,</p> <p>գ. ճիշտ է որոշում գրունտի խտությունը,</p> <p>դ. ճիշտ է որոշում գրունտի պլաստիկությունը և կպչունությունը,</p> <p>ե. ճիշտ է որոշում գրունտի փքումը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Որոշել գրունտների ջրային հատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում գրունտներում պարունակվող ջրի տեսակները,</p> <p>բ. ճիշտ է բնութագրում գրունտներում ջրի շարժումը,</p> <p>գ. ճիշտ է գնահատում գրունտի խոնավության, ջրանցիկության և ջրամբարձության հատկանիշները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ջրի ազդեցությունը ճանապարհային շինարարությունում գրունտների օգտագործման դեպքում,</p> <p>ե. գիտի հողային պաստառի ջրային և ջերմային ռեժիմը և ճիշտ է կարգավորում դրանք:</p>
Ուսումնառության արդյունք 5	Որոշել գրունտների մեխանիկական հատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում բեռնվածքի տակ գրունտի կայունությունը,</p> <p>բ. ճիշտ է կազմում ճնշումը և ծակոտկենությունը,</p> <p>գ. ճիշտ է որոշում գրունտների սահքի դիմադրությունը,</p>

	դ. ճիշտ է որոշում գրունտների առավելագույն խտությունը և լավագույն խոնավությունը, ե. ճիշտ է որոշում գրունտի առաձգականության մոդուլը:
Ուսումնառության արդյունք 6	Գնահատել բնահողերը և հողային գոտիները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում բնահողերը, բ. ճիշտ է դասակարգում բնահողերը և բնության մեջ նրանց գոտիականությունը, գ. ճիշտ է որոշում հողային գոտիները, դ. ճիշտ է բնութագրում ճանապարհակլիմայական գոտիները, ե. ճիշտ է ներկայացնում գրունտների հատկությունների փոփոխման առանձնահատկությունները սառչման դեպքում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ. ՀԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՂՆԵՐ, ԱՄՐԱՑՎԱԾ ԳՐՈՒՆՏՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-008
Մոդուլի նպատակը	Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների և անբարձրագույնի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանման աշխատանքներում օգտագործվող հանքային կապակցող նյութերի, ցեմենտբետոնի, ամրացրած գրունտների, պլաստմասսաների և տարբեր շինարարական նյութերի ընտրության և կիրառման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-007, <<Ինժեներական երկրաբանության հիմունքներ, գրունտագիտություն>> մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ընտրել հանքային կապակցող նյութեր
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում հանքային կապակցող նյութերը, բ. ճիշտ է ընտրում օդային կապակցող նյութերը, գ. ճիշտ է ընտրում հիդրավլիկական կապակցող նյութերը, դ. ճիշտ է ընտրում պորտլանդցեմենտը,

	<p>ե. ճիշտ է բացատրում ցեմենտաքարի քայքայումը,</p> <p>զ. ճիշտ է ընտրում հատուկ պորտլանդցեմենտները,</p> <p>է. ճիշտ է ընտրում պուզոլանային և խարամային ցեմենտները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում կավահողային ցեմենտը և նրա հիմքով ցեմենտները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում հանքային կապակցող նյութերի տեղափոխումը, ընդունումը և պահպանումը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ընտրել ցեմենտբետոնը, շինարարական շաղախները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում ցեմենտբետոնը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ցեմենտբետոնի լցանյութերին ներկայացվող պահանջները,</p> <p>գ. ճիշտ է բնութագրում բետոնային խառնուրդի հիմնական հատկությունները,</p> <p>դ. ճիշտ է բնութագրում ցեմենտբետոնի հիմնական հատկությունները</p> <p>ե. ճիշտ է ընտրում ճանապարհային բետոնը և բետոնի մյուս տեսակները</p> <p>զ. ճիշտ է որոշում ցեմենտբետոնի կազմը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում բետոնային խառնուրդի պատրաստումը, տեղափոխումը և տեղադրումը, որակի հսկողությունը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում բետոնային աշխատանքների կատարման առանձնահատկությունները ձմռանը,</p> <p>թ. ճիշտ է ընտրում հավաքովի բետոնե և երկաթբետոնե կառուցվածքները և շինվածքները,</p> <p>ժ. ճիշտ է ընտրում շինարարական շաղախները,</p> <p>ժա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումները բետոնային աշխատանքների կատարման տեխնոլոգիական գործընթացներում:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ընտրել գրունտների ամրացման նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գրունտների ամրացման նշանակությունը և եղանակները,</p> <p>բ. ճիշտ է կազմակերպում գրունտների ամրացումը անօրգանական կապակցող նյութերով,</p> <p>գ. ճիշտ է կազմակերպում գրունտների ամրացումը օրգանական կապակցող նյութերով</p> <p>դ. ճիշտ է բացատրում գրունտների համակողմանի ամրացումը,</p>

	<p>ե. ճիշտ է որոշում գրունտների և կապակցող նյութերի խառնուրդի կազմը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումները գրունտների ամրացման տեխնոլոգիական գործընթացներում:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ընտրել պլաստմասսաները և այլ պոլիմերային նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում պլաստմասսաները և պոլիմերները,</p> <p>բ. ճիշտ է ընտրում պլաստմասսաների լցանյութերը և մյուս բաղադրիչները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում արհեստական մանածագործական նյութերը (գետտեքստիլներ),</p> <p>դ. ճիշտ է ընտրում ապակեպլաստիկները,</p> <p>ե. ճիշտ է ընտրում գազալցավորված պլաստմասսաները,</p> <p>զ. ճիշտ է ընտրում պլաստմասսաներ ճանապարհային ծածկույթների նշագծման համար,</p> <p>է. ճիշտ է ընտրում պոլիմերային թաղանթները և թաղանթագոյացնող նյութերը,</p> <p>ը. ճիշտ է ընտրում պլաստաբետոնը և պոլիմերացեմենտաբետոնը:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ընտրել տեղական ճանապարհաշինարարական նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում տեղական ճանապարհաշինարարական նյութերը,</p> <p>բ. ճիշտ է ընտրում տեղական բնական քարային նյութերը,</p> <p>գ. ճիշտ է ընտրում արդյունաբերական թափոնները, որպես շինանյութ,</p> <p>դ. ճիշտ է ընտրում երկրորդային հումքը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ընտրել ճանապարհաշինարարությունում կիրառվող այլ շինարարական նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բնութագրում մետաղական նյութերը,</p> <p>բ. ճիշտ է ընտրում և կիրառում փայտից նյութերը և շինվածքները,</p> <p>գ. ճիշտ է ընտրում տանիքածածկի և ջրամեկուսիչ նյութերը,</p>

	<p>դ. ճիշտ է կիրառում լաքաներկային նյութերը,</p> <p>ե. ճիշտ է ընտրում և կիրառում ասբեստացեմենտային և այլ նյութերը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԻՆՃԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՆՆՈՒՄՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-009
Մոդուլի նպատակը	Ձևավորել ինժեներա-երկրաբանական և որոնողական հետազննումների իրականացման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-006, <<Ճանապարհային նյութեր բնական և արհեստական քարային նյութեր, օրգանական կապակցող նյութեր>>, ԱՀԱԱՕ 5-11-008 <<Ճանապարհային նյութեր հանքային կապակցող նյութեր >>, ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ինժեներա-երկրաբանական աշխատանքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ինժեներա-երկրաբանական հետազննումները,</p> <p>բ. ճիշտ է ընտրում սարքավորումները և տեխնիկական միջոցները,</p> <p>գ. ճիշտ է կազմում և լրացնում դաշտային հետազննումների պահանջվող փաստաթղթերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բնության պահպանության և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը ինժեներա-երկրաբանական աշխատանքներ կատարելիս:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել ծրագծի երկայնքով ինժեներա-երկրաբանական հետազննումներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է հետազննում ծրագծի երկայնքով գրունտները հողային պաստառի կառուցման նպատակներով,</p> <p>բ. ճիշտ է կազմակերպում սողանքային վայրերի, խոր հանույթների, սարալանջերի և այլ վայրերի հետազննումը</p> <p>գ. ճիշտ է կազմակերպում կամրջային անցումների հետազննումը,</p> <p>դ. ճիշտ է բացատրում ճահիճների հետազննումը,</p> <p>ե. ճիշտ է ընտրում հետազննման երկրաֆիզիկական մեթոդը:</p>

Ուսումնառության արդյունք 3	Կատարել ճանապարհաշինարարական նյութերի որոնում և հետազննում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հետախուզման էությունը, բ. գիտի ավագի, կոպիճի և քարի հանքավայրերի հետախուզումների առանձնահատկությունները, գ. ճիշտ է կազմակերպում ամրացման ենթակա տեղական նյութերի հետազննումը, դ. ճիշտ է կազմակերպում գրունտների ամրացումը և ընտրում գրունտախառնուրդի տեսակը, ե. ճիշտ է կազմակերպում և իրականացնում ճանապարհաշինարարական նյութերի որոնման և հետազննման ժամանակ բնապահպանական միջոցառումները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-010
Մոդուլի նպատակը	Ձևավորել կիրառական մեխանիկայի հաշվարկների կատարման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստատիկայի հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերում պարզ համակարգի հողակապված մարմինների վրա գործող ակտիվ ու ռեակտիվ ուժերը, բ. ճիշտ է որոշում ուժերի մոմենտները կետի և առանցքի նկատմամբ, գ. ճիշտ է որոշում տվյալ կետում կիրառված երկու ուժերի համագործ գծանկարչական և գծավերլուծական եղանակներով, դ. ճիշտ է որոշում բազմաթիվ զուգամիտվող ուժերի համագործ գծանկարչական եղանակով, ե. ճիշտ է լուծում երեք ուժերի հարթ համակարգի հավասարակշռության խնդիրը ուժային եռանկյան եղանակով, զ. ճիշտ է որոշում կենտրոնացված ուժերով և մոմենտներով բեռնավորված բարձակային և երկհենարան հեծանների և այլ մարմինների հենարանային հակազդումները:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծանրության կենտրոնը և հարթ հատվածների երկրաչափական բնութագրերը:

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում երկրաչափական պատկերների ծանրության կենտրոնի կոորդինատները,</p> <p>բ. ճիշտ է որոշում երկրաչափական պատկերներից և գլանվածքի ստանդարտ պրոֆիլներից կազմված մարմինների հարթ հատվածների ծանրության կենտրոնի կոորդինատները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել նյութերի դիմադրության հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կառուցում երկայնական ուժերով բեռնավորված ձողի ձգման (սեղման) լարումների էպյուրը և հաշվում երկարացումը (կարճացումը),</p> <p>բ. ճիշտ է կառուցում ոլորող մոմենտով բեռնավորված ձողի ոլորման էպյուրը և հաշվում լայնական հատույթների պտտման անկյունը,</p> <p>գ. ճիշտ է կառուցում հեծանի ծող մոմենտների և լայնական ուժերի էպյուրները և ընտրում ստանդարտ պրոֆիլներ՝ ըստ տեսականու,</p> <p>դ. ճիշտ է որոշում լիսեռի տրամագիծը հարթ ծռման և ոլորման համատեղ ազդեցության դեպքում,</p> <p>ե. ճիշտ է կատարում պարզ լայնական հատվածքի կոշտ ձողերի կայունության և թույլատրելի բեռնվածքի ստուգողական հաշվարկները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել կինեմատիկայի և ստատիկայի տարրերը:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է հաշվում առաջադրված հետագծով շարժվող նյութական կետի և առաջընթաց շարժվող մարմնի անցած ճանապարհը, արագությունը և արագացումը,</p> <p>բ. ճիշտ է հաշվում պտտվող մարմնի անկյունային տեղափոխությունը, արագությունը և արագացումը,</p> <p>գ. ճիշտ է հաշվում պտտվող մարմնի ցանկացած կետի արագությունը, շոշափող և նորմալ արագացումները,</p> <p>դ. ճիշտ է լուծում շփման ուժերի հաշվառմամբ կինետոստատիկ եղանակով մարմնի առաջընթաց շարժման խնդիրները,</p> <p>ե. ճիշտ է լուծում աշխատանքի հաշվման պարզ խնդիրները մարմնի առաջընթաց և պտտական շարժման դեպքում:</p>
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք Ն Ե Ր Ի Ս Ս Ա Տ Ի Կ Ա»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-011
Մոդուլի նպատակը	Ձևավորել կառուցվածքների ստատիկական հաշվարկների կատարման կարողություններ:

Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-010, <<Կիրառական մեխանիկա>> մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել շարժական բեռնվածքով բեռնավորված ստատիկորեն որոշելի հեծանները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է որոշում շարժական բեռնվածքի դեպքում հենարանային հակազդումների, լայնական ուժերի և ծոող մոմենտների ազդման գիծը հեծանի ցանկացած կտրվածքում:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ստատիկորեն որոշելի հարթ ֆերմաներն ու շրջանակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում ֆերմաների հաշվարկն՝ ըստ հաստատուն կամ ժամանակավոր բեռնվածքի ազդման գծի, բ. ճիշտ է կառուցում ճիգերի ազդման գիծը ֆերմայի երեք, չորս ձողերում, գ. ճիշտ է որոշում ճիգերը ֆերմայի ձողերում, հաստատուն և շարժական բեռնվածքով ազդման գիծը բեռնավորելու դեպքում, դ. ճիշտ է կառուցում և ստուգում շրջանակային կառուցվածքների լայնական ուժերի, ծոող մոմենտների և երկայնական ուժերի էպյուրները, ե. ճիշտ է որոշում տեղափոխությունները ստատիկորեն որոշելի հարթ համակարգերում:
Ուսումնառության արդյունք 3	Հաշվել եռահոդ կամարները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է որոշում հենարանային հակազդումները, բ. ճիշտ է որոշում լայնական ուժը, ծոող մոմենտը և երկայնական ուժը կամարի ցանկացած կտրվածքում, գ. ճիշտ է կառուցում լայնական ուժերի էպյուրը, դ. ճիշտ է ընտրում կամարի ռացիոնալ առանցքը:
Ուսումնառության արդյունք 4	Հաշվել անխզելի հեծանները երեք մոմենտների հավասարման օգնությամբ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կառուցում հեծանի ծոող մոմենտների էպյուրները արտաքին բեռնվածքների և հենարանային հակազդումների էպյուրների գումարման միջոցով,

	բ. ճիշտ է կառուցում հեծանի լայնական ուժերի էպյուրները, գ. ճիշտ է հաշվում հեծանի իրական հակազդումները:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ուղղաձիգ հետին եզրով հենապատի հաշվարկ լցվածքի հորիզոնական մակերևույթի և ժամանակավոր բեռնվածքի դեպքում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ստուգում հիմքի շարվածքի ամրությունը, բ. ճիշտ է ստուգում հիմնատակի ամրությունը հիմքի ներքանում, գ. ճիշտ է ստուգում պատի կայունությունն՝ ըստ հիմնատակի նկատմամբ սահքի, դ. ճիշտ է ստուգում պատի կայունությունը՝ ըստ կողաջրջման:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՐՀԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԻՄՔԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-012
Մոդուլի նպատակը	Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցների հիմքերի և հիմնատակերի ընտրության, շինարարության, նորոգման և պահպանման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-007 << Գրունտների հատկությունների որոշում և բնահողերի գնահատում >> , ԱՃՕՇ 5-11-011, <<Կառուցվածքների ստատիկա>> մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կառուցվածքների հիմքերը և հիմնատակերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հիմքերի և հիմնատակերի տեսակները, բ. ճիշտ է ներկայացնում հիմքերին ներկայացվող պահանջները, գ. ճիշտ է հաշվում հիմքերի նստվածքները:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել փոքր խորության հիմքերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում փոքր խորության հիմքերը,

	բ. ճիշտ է որոշում փոստրակի տեսակը և կազմակերպում նրա պատերի ամրակապման աշխատանքները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ցցերից և ցցաթաղանթներից պատրաստված հիմքերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ցցերի և ցցաթաղանթային հիմքերի տեսակները, բ. ճիշտ է ընտրում ցցային և ցցաթաղանթային հիմքը, գ. ճիշտ է ընտրում ցցերի հատուկ տեսակները,
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել իջեցվող հորերից և սուզարկղերից կառուցված հիմքերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կավային շաղախի օգնությամբ կառուցվող հիմքերը, բ. ճիշտ է ներկայացնում իջեցվող հորերը և նրանց օգտագործման պայմանները, գ. ճիշտ է ներկայացնում սուզարկղային հիմքերը:
Ուսումնառության արդյունք 5	Կառուցել փոքր խորության հիմքերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հիմքերի փոստրակների կառուցումը ջրով չծածկված տեղանքում, բ. ճիշտ է կատարում փոստրակների կառուցումը և պատի ամրակապումը ջրով ծածկված տեղանքում, գ. ճիշտ է բացատրում սառած գրունտում հիմքերի կառուցման առանձնահատկությունները, դ. ճիշտ է կատարում հիմքերի կառուցումը փոստրակներում:
Ուսումնառության արդյունք 6	Կազմակերպել մեծ խորության հիմքերի կառուցումը ցցերով, ցցաթաղանթներով և իջեցվող հորերով
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում ցցերի վարսման մուրճերի տեսակները, բ. ճիշտ է ընտրում ցցահար մեխանիզմները և վերամբարձիչները, գ. ճիշտ է պահպանում ցցերի ընկղման տեխնոլոգիան, դ. ճիշտ է ընտրում ցցասալի կառուցման եղանակը, ե. ճիշտ է կազմակերպում ցցաթաղանթներից և իջեցվող հորերից հիմքերի կառուցումը:
Ուսումնառության արդյունք 7	Կազմակերպել հիմքերի ուժեղացումը և վերակառուցումը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է որոշում կառուցվածքների հիմքերի ներքանի մեծացման չափը, բ. ճիշտ է կազմակերպում հիմքերի վերակառուցման աշխատանքները,

	գ. ճիշտ է կազմակերպում հիմնատակերի ուժեղացման աշխատանքները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԻԴՐԱՎԼԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԹԱՓՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-013
Մոդուլի նպատակը	Ձևավորել ջրահեռացման և ջրթող կառուցվածքների հիդրավլիկ հաշվարկների և գործնական խնդիրների լուծման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիդրոստատիկայի հիմունքներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում հիդրոստատիկա, հիդրոդինամիկա, ջրաբանություն (հիդրոլոգիա), ջրաերկրաբանություն եզրույթները, բ. ճիշտ է բացատրում հիդրոստատիկ ճնշումը գ. ճիշտ է ներկայացնում հիդրոստատիկայի հիմնական հավասարումը դ. ճիշտ է որոշում շինարարական կառուցվածքների հարթ պատի վրա հիդրոստատիկ ճնշման ուժը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հիդրոդինամիկայի հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնորոշում ջրի հոսանքը և նրա հիդրավլիկական բնութագրերը բ. ճիշտ է ներկայացնում հեղուկների շարժման տեսակները, գ. ճիշտ է ներկայացնում Բեռնուլիի հավասարումը (առանց արտաձման), դ. ճիշտ է բնութագրում բաց հուններում ջրի հավասարաչափ շարժումը, ե. ճիշտ է որոշում հոսանքի թույլատրելի արագությունը, զ. ճիշտ է կատարում ջրատար առուների հիդրավլիկական հաշվարկը, է. ճիշտ է որոշում հոսանքի կենցաղային խորությունը և կենցաղային արագությունը, ը. ճիշտ է կիրառում ջրի ելքի հավասարումը:

Ուսումնառության արդյունք 3	Ընտրել ջրթափները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում և ընտրում ջրթափները, բ. ճիշտ է ընտրում փոքր կամուրջները և ճանապարհային խողովակները որպես լայն շեմքով ջրթափեր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՃԱՆԱԴԱՐՀԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-014
Մոդուլի նպատակը	Ձևավորել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական շահագործման կազմակերպման անհրաժեշտ կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ ԱԱՕ 5-11-001 <<Անվտանգություն և առաջին օգնություն>> մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական շահագործման համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում մեքենաների և մեխանիզմների արտադրողականության բարձրացումը, աշխատանքների ինքնարժեքի նվազեցումը, վառելիքա-էներգետիկական ռեսուրսների տնտեսումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության փոքրացումը՝ որպես համակարգի բաղկացուցիչներ, բ. ճիշտ է բացատրում հիմնական շահագործման ցուցանիշները և սպառողական հատկությունները, գ.ճիշտ է բացատրում հուսալիությունը, տեխնոլոգիականությունը, տեխնիկական գեղագիտության ցուցանիշները, էրգոնոմիկական ցուցանիշները, չափորոշման –միասնականացման-համափոխարինելիության աստիճանը, դ.ճիշտ է գնահատում մեքենաների աշխատանքի որակի և օգտագործման տնտեսական արդյունավետության կախվածությունը նրանց տեխնիկական վիճակից, ե. ճիշտ է բացատրում հուսալիության հիմնական հասկացությունները,

	<p>գ. ճիշտ է կիրառում շինարարական մեքենաների տեխնիկական շահագործման և վերանորոգման ցուցանիշները,</p> <p>է. ճիշտ է կազմում մեքենաների և մեխանիզմների շահագործման հրահանգները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործման պայմանները և կատեգորիաները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում շինարարական մեքենաների շահագործման ընդհանուր պահանջները՝ համաձայն չափորոշիչի,</p> <p>բ. ճիշտ է բնութագրում շահագործման ճանապարհային պայմանները՝ տեղանքի ռելիեֆը, ճանապարհի տեխնիկական կատեգորիաները և ծածկույթների տեսակները,</p> <p>գ. ճիշտ է բացատրում շահագործման տրանսպորտային պայմանները,</p> <p>դ. ճիշտ է շարադրում շահագործման բնակլիմայական պայմանները,</p> <p>ե. ճիշտ է թվարկում շահագործման պայմանների կատեգորիաները,</p> <p>զ. ճիշտ է գնահատում տեխնիկական վիճակի փոփոխման վրա շահագործման պայմանների (գործոնների) ազդեցությունը,</p> <p>է. ճիշտ է իրականացնում շփման և մաշի նվազեցման աշխատանքները,</p> <p>ը. ճիշտ է չափում մեքենամասերի մաշվածքները և ստուգում չափման ճշտությունը,</p> <p>թ. ճիշտ է կազմակերպում տեխնիկական շահագործումը տարբեր բնակլիմայական պայմաններում:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի պահպանումը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է թվարկում պահպանման եղանակները և կայանատեղերի տեսակները,</p> <p>բ. ճիշտ է իրականացնում փակ կայանատեղերում պահպանման գործընթացները,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում բաց հարթակներում պահպանման գործընթացները,</p> <p>դ. ճիշտ է գործարկում շարժիչը շրջապատող օդի ցածր ջերմաստիճանների դեպքում,</p> <p>զ. ճիշտ է տեղավորում փակ և բաց կայանատեղերում ճանապարհաշինարարական մեքենաները և մասնագիտացված շարժակազմը,</p> <p>է. ճիշտ է կազմակերպում և իրականացնում գազաբալոնային սնման համակարգերով ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի պահպանումը:</p>

Ուսումնառության արդյունք 4	Գնահատել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի տեխնիկական վիճակը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում երթևեկության անվտանգությունը երաշխավորող համակարգերի և մեխանիզմների տեխնիկական վիճակին ներկայացվող պահանջները,</p> <p>բ. կարողանում է արտաքին զննմամբ և ստուգմամբ ճիշտ գնահատել մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակը,</p> <p>գ. ճիշտ է կազմակերպում տեխնիկական արատորոշման գործընթացը,</p> <p>դ. ճիշտ է ձևակերպում և լրացնում շահագործման բացթողման և վերադարձի ժամանակ տեխնիկական վիճակի գնահատման փաստաթղթերը:</p>
Ուսումնառության արդյունք 5	Իրականացնել անվադողերի տեխնիկական շահագործում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անվադողերի տեխնիկական վիճակի և երթևեկության անվտանգության կախվածությունը,</p> <p>բ. ճիշտ է շարադրում անվադողերի տեխնիկական շահագործման կանոնները,</p> <p>գ. ճիշտ է պահում դողածածկանները և դողախցերը,</p> <p>դ. ճիշտ է իրականացնում անվադողերի տեխնիկական սպասարկման և նորոգման գործընթացները,</p> <p>ե. ճիշտ է հաշվառում անվադողերը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ընտրել ճանապարհաշինարարական մեքենաների և մասնագիտացված շարժակազմի շահագործական նյութերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժիչների վառելանյութերը,</p> <p>բ. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժիչների քսանյութերը,</p> <p>գ. ճիշտ է ընտրում և օգտագործում շարժահաղորդակներում օգտագործվող յուղերը և քսուկները,</p> <p>դ. ճիշտ է ընտրում և օգտագործում տեխնիկական հեղուկները,</p> <p>ե. ճիշտ է պահպանում, նորմավորում և բաշխում վառելիքաքսանյութերը և տեխնիկական հեղուկները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-015
Մոդուլի նպատակը	Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների կառուցվածքային տարրերի ընտրման և կիրառման

	կարողություններ
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-002, <<Ինժեներական գեոդեզիա >> ԱՃՕՇ 5-11-008, <<Ճանապարհաշինարարական նյութեր, հանքային կապակցողներ, ամրացված գրունտներ և այլ նյութեր>> ԱՃՕՇ 5-11-006 << Ճանապարհաշինարարական նյութեր.բնական և արհեստական քարային նյութեր, օրգանական կապակցող նյութեր>> մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների դասակարգումը, տրանսպորտա-շահագործական ցուցանիշները, << ճանապարհային ցանցի առկա վիճակը և զարգացման հեռանկարները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է դասակարգում ավտոմոբիլային ճանապարհները և բնութագրում տրանսպորտա- շահագործական ցուցանիշները, բ. ճիշտ է ներկայացնում << ճանապարհային ցանցի առկա վիճակը և զարգացման հեռանկարները, գ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հիմնական հասկացությունները:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների տարրերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում օտարման շերտը, բ. ճիշտ է ներկայացնում ճանապարհների հողային պաստառի տարրերը, գ. ճիշտ է ներկայացնում ճանապարհների արհեստական կառույցների տեսակները, դ. ճիշտ է ներկայացնում ճանապարհային կահավորանքի տարրերը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների լայնական կտրվածքը և դրա տարատեսակները, բ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառը, երթևեկելի մասը, ջրատար առուները և կողնակները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների հատակագծի հիմնական բաղկացուցիչները

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում ավտոմոբիլային ճանապարհների հատակագիծը՝ համաձայն գործող ՀՀ ՇՆ-ին,</p> <p>բ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների ուղղագիծ և կորագիծ հատվածները,</p> <p>գ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասի լայնացումները կորություններում,</p> <p>դ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների թեքուղիները,</p> <p>ե. ճիշտ է գնահատում տեսանելիության ապահովումն ավտոմոբիլային ճանապարհներում,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում աերոդրոմների կառուցվածքային առանձնահատկությունները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների երկայնական կտրվածքը և թեքությունները,</p> <p>բ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների նախագծային գիծը և դրա անցկացումը,</p> <p>գ. ճիշտ է պատկերում և ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների ուղղաձիգ կորերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների հանգույցները:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ճանապարհի հողային պաստառը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ճանապարհի հողային պաստառի տարրերը,</p> <p>բ. ճիշտ է բնութագրում ճանապարհաշինարարական բնահողերը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հողային պաստառի ձևափոխությունները, տիպային լայնական կտրվածքները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հողային պաստառի խոնավացման պատճառները, ջրահեռացման համակարգը:</p>
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել ճանապարհային պատվածքը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է դասակարգում ճանապարհային պատվածքները և դրանց կառուցվածքային շերտերը,</p> <p>բ. ճիշտ է ընտրում ճանապարհային հիմքերը, դրանց շերտերը,</p> <p>գ. ճիշտ է ընտրում ճանապարհային ծածկույթները:</p>
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը՝ «ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԱԵՐՈՂՐՈՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՆՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-016

Մոդուլի նպատակը	Ձևավորել հետազննման աշխատանքների կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-009 <<Ինժեներաերկրաբանական հետազննումներ>> մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բացատրել տնտեսական հետախուզումները և նրանց խնդիրները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում <<բեռնահոսք>>, <<փոխադրումների ծավալ>>, <<բեռնաշրջանառություն>>, <<բեռնալարվածություն>> ցուցանիշները, բ. ճիշտ է ներկայացնում ճանապարհատնտեսական հետազննումների նշանակությունը, կազմը և մեթոդները, գ. ճիշտ է ներկայացնում հետազննման շրջանի տնտեսական բնութագիրը, դ. ճիշտ է հիմնավորում ծրագրի ուղղությունը ըստ տնտեսական հետազննման, ե.ճիշտ է ներկայացնում շինարարությունում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության ցուցանիշները:
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների մանրամասն տեխնիկական հետազննումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մանրամասն տեխնիկական հետազննումների նշանակությունը և կազմը, բ. ճիշտ է կազմակերպում նախապատրաստական աշխատանքները, գ. ճիշտ է որոշում հետազննումների դաշտային շրջանի խնդիրները, դ.ճիշտ է կազմակերպում հետազննման (արշավա) խմբի օղակների աշխատանքները տարբեր տեղանքային պայմաններում ե. ճիշտ է հսկում դաշտային աշխատանքները և կատարման նորմերը զ.ճիշտ է պահպանում ավտոմոբիլային ճանապարհների հետազննումների ընթացքում անվտանգության տեխնիկայի պահանջները, է. ճիշտ է կազմակերպում գրասենյակային աշխատանքները և ձևակերպում անհրաժեշտ փաստաթղթերը, ը.ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային ճանապարհների նախագծման հետազննական աշխատանքների ավտոմատացված,

	օդահետազննական վերգետնյա տարածալուսանկարչական, երկրաչափական և էլեկտրոնային հեռաչափության կիրառման առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպել ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և վերակառուցման տեխնիկական հետազննումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ավտոմոբիլային ճանապարհների վերակառուցում և նորոգում հասկացությունը, բ. ճիշտ է հիմնավորում գործող ճանապարհների վերակառուցման անհրաժեշտությունները, գ. ճիշտ է ներկայացնում նախապատրաստական շրջանի առանձնահատկությունները, դ. ճիշտ է կազմակերպում հետազննական խմբի առանձին օղակների աշխատանքները, ե. ճիշտ է ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը:
Ուսումնառության արդյունք 4	Կազմակերպել աերոդրոմային հրապարակների հետախուզումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աերոդրոմային հրապարակների ընտրման պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում հետազննական աշխատանքների կազմը, գ. ճիշտ է կազմակերպում օդանավակայանային հրապարակների հետազննման աշխատանքները, դ. ճիշտ է ձևակերպում հետազննական աշխատանքների տեխնիկական փաստաթղթերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԱՃՕՇ 5-11-017
Մոդուլի նպատակը	Ձևավորել ավտոմոբիլային ճանապարհների նախագծման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՃՕՇ 5-11-015 <<Ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների կառուցվածքը>>, ԱՃՕՇ 5-11-016 <<Ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների հետազննում>> մոդուլներները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել նախագծման փուլերը, նախագիծ, աշխատանքային փաստաթղթեր, աշխատանքային նախագիծ:

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում երկփուլ և միափուլ նախագծման կազմը և աշխատանքային փաստաթղթերը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում տիպային նախագծերը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Անցկացնել ավտոմոբիլային ճանապարհների ծրագիծը
